ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08 սեպտեմբերի 2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Առաքելյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Կ. Աբգարյան, Լ. Միքայելյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ա. Եղիազարյան, Վ. Թորոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Վերմիշյան:

1. «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման վայրի, մասնակիցներին ուղարկված ծանուցման, հայտերի ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /ընթացակարգի արդյունքների ամփոփման/ մասին.

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 24.08.2017թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2017 թվականի օգոստոսի 31-ին, Ժամը՝ 11:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 Հայտեր էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը	Հայտերի գնահատման արդյունքները /համապատասխանելու դեպքում նշել "X"/
«Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ	X
«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ	«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում armeps.am կայքում հրապարակված հրավերի 7-րդ կետին, ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» N 526 Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետով մասնակցի հայտը մերժվել է
«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ	X
«ԱԼՖԱ» ՍՊԸ	X
«Հեր-ՄուշՇին» ՍՊԸ	X
«Վ ԵՎ Ա» ՍՊԸ	X

2. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2017թ. ընթացքում շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի 31.08.2017թ. Ժամը 11:00-ի N 2 արձանագրությամբ հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած Մասնակից «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ Մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումը չէր համապատասխանում armeps.am կայքում հրապարակված հրավերի 7-րդ կետի պահանջներին: «ՀՀ ԳՆ

ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր հայտարարվել «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն որին ծանուցում է ուղարկվել առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրություն, հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետով էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե էր ներկայացվել հարցում (Հավելված 7) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

3.ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2017թ. ընթացքում շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.09.2017թ. ժամը՝ 14:00-ի N 3 արձանագրությամբ որոշել էր նիստը կասեցնել, քանի որ «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էր անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես, ներկայացված պայմանագիրը կատարվել էր ուշացումով՝ ոչ պատշաճ: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 47-րդ կետով որոշել էր ծանուցում ուղարկել «Սասունասար» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու առկա անհամապատասխանությունը:

4.ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2017թ. ընթացքում շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.09.2017թ. ժամը՝ 11:00-ի N 4 արձանագրությամբ որոշեց մերժել «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը, քանի որ սահմանված ժամկետում վերջինս չէր շտկել առկա անհամապատասխանությունը, սակայն ներկայացրել էր նոր փաստաթղթեր, որոնք չէին համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, ներկայացված նոր պայմանագրերը չեն հանդիսանում հրավերով պահանջվող պատշաճ իրականացրած համանման (նմանատիպ) պայամագրեր, և «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «ԱԼՖԱ» ՍՊԸ-ին, որի առաջարկած գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետով էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում (Հավելված 7) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

5. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2017թ. ընթացքում շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում հանձնաժողովը արձանագրեց հետևյալը՝

5.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԱԼՖԱ» ՍՊԸ-ն, ներկայացրել է համապատասխան փաստաթղթերն ըստ հրավերի պահանջի:

6. Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած եզրակացությունը, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

6.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ԱԼՖԱ» ՍՊԸ-ին:

6.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

6.3 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ն. Առաքելյան

Քարտուղար՝ ---------- Լ.Վերմիշյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Կ. Արգարյան

2. ---------- Լ. Միքայելյան

Բացող անդամներ՝

1. ---------- Ա. Եղիազարյան

2. ---------- Վ. Թորոսյան